

<https://doi.org/10.46991/hc.2022.18.2.18>

Some Observations on the Genealogical Works of Hetum of Corycus

Monte Matevosyan

<https://orcid.org/0000-0003-1251-2233>

PhD student at Matenadaran named after Mesrop Mashtots

monte.matevosyan.95@gmail.com

Keywords: Hetum (Hayton) of Corycus, Cilicia, Jerusalem, Cyprus, Antioch, genealogy, crusaders.

A handwritten collection of the 13th century from Cilicia is preserved in Matenadaran. Its serial number is 1898. The prince-historian Hetum of Corycus is considered to be the one, who has ordered it. The collection presents several historical works, including four genealogical works. These materials were published by V. Hakobyan, and earlier, Gh. Alishan had considered that the author was Hetum of Corycus, bringing several arguments for that. In this article, the genealogical works and facts presented in them are compared with other materials of the collection, including the work “History of Chronicle” translated by Hetum of Corycus, as a result of which more than thirty data-repetitions and at the same time stylistic similarities are revealed. This further substantiates the fact that the originals belonged to Hetum of Corycus. At the same time, it is shown that the presentation of the genealogy of the kings in the mentioned four originals is skillfully intertwined with the recording of Armenian-Latin marriages. The genealogical works of the 1898 collection have great value as a source.

Որոշ դիտարկումներ Հեթում Կոռիկոսցու ազգաբանական գործերի վերաբերյալ

Մոնթե Մաթևոսյան

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ասպիրանտ

Հիմնաբառեր՝ Հեթում Կոռիկոսցի, Կիլիկիա, Երուսաղեմ, Կիպրոս, Անտիոք, ազգաբանություն, խաչակիրներ:

Մատենադարանում պահվում է XIII դարի Կիլիկիայում գրված մի ժողովածու՝ ձեռ. թիվ 1898, որի պատվիրատու ընդունված է համարել իշխան ու պատմիչ Հեթում Կոռիկոսցուն: Ժողովածուն ներկայացնում է պատմագիտական մի քանի աշխատություն, որոնց թվում՝ ազգաբանական չորս բնագիր: Դրանք հրատարակած Վ. Հակոբյանը, իսկ ավելի վաղ նաև Ալիշանը համարել են, որ հեղինակը Հեթում Կոռիկոսցին է, և դրա համար բերել են մի քանի փաստարկ: Սույն հոդվածում ազգաբանական գործերն ու դրանցում ներկայացված փաստերը համեմատվում են ժողովածուի մյուս նյութերի, այդ թվում՝ Հեթում Կոռիկոսցու թարգմանած

History and Culture. Journal of Armenian Studies, Vol.-2(18), 2022, pp. 18-25



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 09.07.2022

Revised: 12.11.2022

Accepted: 15.12.2022

© The Author(s) 2022

«Պատմություն իրոնիկոնի» գործի հետ, որի արդյունքում երեք տասնյակից ավելի տվյալների ու ձևակերպումների կրկնության, միաժամանակ ոճական ընդհանրություններ են ի հայտ բերվում: Դրանով ավելի է հիմնավորվում բնագրերի՝ Հեթում Կոռիկոսցուն պատկանելու իրողությունը: Միաժամանակ ցույց է տրվում, որ նշված չորս բնագրերում թագավորների տոհմաբանության ներկայացումը վարպետորեն միահյուսված է հայ-լատին ամուսնական կապերի արձանագրմանը: 1898 ժողովածուի ազգաբանական բնագրերը աղբյուրագիտական կարևոր արժեք են ներկայացնում:

Некоторые наблюдения о генеалогических работах Гетум Корикосци

Монте Матевосян

Аспирант Матенадарана им. Месропа Маштоца

Ключевые слова: Гетум Корикосци (Гетум из Корикоса), Киликия, Иерусалим, Кипр, Антиохия, генеалогия, крестоносцы.

В Матенадаране хранится сборник XIII века - рукопись номер 1898, заказчиком которого принято считать князя и историка Гетума Корикосци (Гетума из Корикоса). В сборнике представлены несколько историографических работ, в том числе четыре генеалогических оригинала. Публиковавшие их В. Акобян, а ранее Г. Алишан считали, что автором был Гетум из Корикоса, приводя несколько аргументов в пользу этого. В данной статье генеалогические работы и представленные в них факты сравниваются с другими материалами сборника, в том числе с работой «История хроник» в переводе Гетума из Корикоса, в результате чего выявлено более тридцати данных-повторений и в то же время обнаруживаются стилистические сходства. Это еще раз подтверждает тот факт, что работы принадлежали Гетуму из Корикоса. Также показано, что изложение генеалогии царей в упомянутых четырех подлинниках умело переплетается с записью армяно-латинских браков. Генеалогические работы сборника 1898 представляют собой важную источниковедческую ценность.

* * *

Մուտք: Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է XIII դարի կիլիկյան մի ժողովածու՝ ձեռ. թիվ 1898, որի պատվիրատու ընդունված է համարել Հեթում Կոռիկոսցի պատմիչին¹: Ժողովածուն ներկայացնում է պատմագիտական մի քանի աշխատություն: Առաջին նյութը Սամուել Անեցու «Ժամանակագրությունն» է (թերթ 6ա-96բ), որին հաջորդում է Հեթում Կոռիկոսցու թարգմանած ու լրացրած «Պատմութիւն իրոնիկոնին, զոր նրաստ ծառայս Քրիստոսի Հեթումս տէր Կուռիկասոյ փոխեցի ի Ֆռանգ գրոց ի թուին Հայոց ՉԽԵ» ժամանակագրությունը (123ա-167բ): Վերջինիս հաջորդում են ազգաբանական (տոհմաբանական) գործերը, որոնք համապատասխանաբար վերնագրված են «Պատմութիւն ազգին Ռովբինանց, թէ որպէս տիրեցին Կիլիկիո» (168ա-172ա), «Ազգաբանութիւն թագաւորացն Երուսաղէմի և թագաւորացն Կիպրոսի» (172ա-174բ), «Ազգաբանութիւն բրընձոյն

¹Կիլիկյան նշանավոր իշխան, որը հայ պատմագրության մեջ հայտնի է Հեթում պատմիչ անունով, իսկ եվրոպականում՝ Հայթոն հայ անունով:

Անտիոքա» (174բ-175բ): Ազգաբանական գործերին հաջորդում են Միքայել Ասորու «Պատմութիւն արարեալ պատրիարզին Ասորոց Միխայէլի, գոր Վարդան վարդապետ Արեւելցին փոխեալ էր յասորի գրոց» (176ա-217բ) պատմությունը և այլ նյութեր: Ժողովածուի ազգաբանական գործերը հայ պատմագիտության մեջ սակավ են ուսումնասիրված: Առաջին անգամ դրանք հրատարակել է Վազգեն Հակոբյանը իր «Մանր ժամանակագրությունների» երկրորդ հատորում¹ (Հակոբյան, 1956, 94):

Ազգաբանական բնագրերի թվագրման հարցի շուրջ : «Պատմութիւն ազգին Ռովբինանց, թէ որպէս տիրեցին Կիլիկիո» բնագիրը սկսվում է Բագրատունյաց Գագիկ Բ արքայի հիշատակմամբ և Ռուբենի գլխավորությամբ Կիլիկիայում իշխանության հաստատմամբ: Այն վերջանում է Հեթում Բ-ի ավագ քրոջ Զապելի ամուսնությամբ, որը տեղի է ունեցել 1293 թ. (Մաթևոսյան, 2011, 57): Դրանից հետո տեղի ունեցած այլ իրադարձության մասին հիշատակում չկա ո՛չ այս և ո՛չ էլ մյուս ազգաբանական աշխատանքներում: Հաջորդ բնագիրը, որը ներկայացնում է Երուսաղեմի արքաներին, սկսվում է 1099 թ. Երուսաղեմի գրավմամբ և ավարտվում XIII դարի երկրորդ կեսին վերաբերող տեղեկություններով: Հեղինակին հայտնի է Կոնրադ Դ-ի որդին Կոնրադինը (1254-1268 թթ.) (Տեր-Պետրոսյան, 2015, 95): Երրորդ բնագիրը Կիպրոսի արքաներին է նվիրված: Այն սկսվում է Կիպրոսի թագավորության հիմնադրման վկայությամբ (XII դարի 90-ական թվականների սկիզբ) և ավարտվում Լևոն Բ արքայի թոռան՝ Թորոսի որդու Լևոնի ծննդյան վկայությամբ (1289 թ.) (Մաթևոսյան, 2011, 56): Չորրորդ և վերջին բնագիրը նվիրված է Անտիոքին, որը սկսվում է Անտիոքի իշխանապետության հաստատմամբ (1098 թ.) և ավարտվում XIII դարի երկրորդ կեսով: Բնագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ազգաբանական այս գործերն ավարտվում են XIII դարի երկրորդ կեսով, իսկ ամենաուշ հիշատակված իրադարձությունը Հեթում Բ արքայի ավագ քրոջ Զապելի ամուսնությունն է (1293 թ.):

Ազգաբանական բնագրերի հեղինակի խնդրի շուրջ: Ինչ վերաբերում է բնագրերի հեղինակի խնդրին, ապա Վ. Հակոբյանը, հղում անելով Ղ. Ալիշանին, Ռուբինյաններին նվիրված բնագիրը համարում է Հեթում Կոռիկոսցու աշխատանքը՝ նշելով որ չգիտի, թե ինչն է հանդիսացել այդ եզրակացության հիմքը, միաժամանակ ներկայացնում է այդ եզրակացությունը հավաստող մի քանի փաստարկ: Որպես առաջին փաստարկ Հակոբյանը հիշատակում է Կիպրոսի թագավորներին նվիրված բնագրից հետևյալ հատվածը. «Կի եղև թագաւոր Երուսաղեմի *ընդ իւր կնոջն դեհաց Սպիլին, որպէս ի վերոյ յիշեցաք*»: Ըստ նրա՝ այս ակնարկությամբ հեղինակը նկատի ունի ոչ թե Երուսաղեմի թագավորների բաժնի «Եկաց Ը-երրորդ թագաւոր Երուսաղեմի Կի տ Լըզինայն այր վերոյասացեալ Սպլին» հատվածը, այլ Հեթում Պատմիչի «Պատմութիւն խրոնիկոնին» երկից՝ «1186 մեռաւ թագաւորն Երուսաղեմի Պաղտին Փոքրն և *եկաց ի թագաւորութիւնն Ը-երրորդ մայր նորա Սպիլ թագուհին և իր հայրգիրն Կի տը Լըզինայն*» հատվածը, որովհետև վերևում բերված և այս հատվածների ընդգծված մասերը ավելի մոտ են իրար: Վազգեն Հակոբյանը նշում է, որ այս հատվածների ընդգծված մասերը մոտ են իրար, բայց թե ինչով են մոտ նա չի մանրամասնում: Փորձենք

¹ Ազգաբանական գործերին անդրադարձել են նաև՝ F. N. Finck, Zeitschrift für armenische philologie, 1902, 1-es Heft, Marburg, էջ 177, Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հատոր Բ, Երևան, 2007, էջ 67-164, Mutaflan Claude, Hethoum de Korykos, historien arménien, un prince cosmopolite à l'aube du XIVe siècle, "Cahiers de recherches médiévales", N° 1, Orléans, 1996, pp. 158-176 և այլք:

պարզել թե ինչի մասին է խոսքը: Երբ ուսումնասիրում ենք Կիպրոսի թագավորներին նվիրված բնագրից մեջբերված հատվածը, ապա տեսնում ենք, որ այնտեղ նշվում է Գի Լուսինյանը Երուսաղեմի արքա էր կամ Սիբիլի կողմից, կամ Սիբիլի հետ՝ «...դեհաց Սպլիին»¹: Ինչպես հայտնի է, Գի Լուսինյանին՝ իբրև Սիբիլ թագուհու ամուսնու, Երուսաղեմի գահն անցնում է 1186 թ. Բաղդուին Ե-ի մահից հետո: Գին՝ որպես Սիբիլի ամուսին, շարունակում է գահակալել Երուսաղեմում մինչև 1190 թ. հոկտեմբերը, երբ Սիբիլն ու իր երկու դուստրերը մահանում են: Դրանից հետո Գին հայտնվում է գահագուրկ լինելու վտանգի առաջ, որովհետև, ըստ ֆեոդալական իրավունքի, գահի օրինական ժառանգորդ էր դարձել Ամորի թագավորի երկրորդ դուստր Իզաբելը: Եվ միայն Աքքայում գումարված բարոնների ու խաչակրաց արշավանքի առաջնորդների ժողովը կայացրեց որոշում, ըստ որի՝ Գի Լուսինյանը՝ որպես օծյալ թագավոր, պահպանում է Երուսաղեմի գահը մինչև իր մահը (Տեր-Պետրոսյան, 2015, 90): Փաստորեն՝ Սիբիլի հետ միասին Գին գահակալում է 1186-1190 թթ.: Ստացվում է, որ Կիպրոսի արքաներին նվիրված բնագրից մեջբերված հատվածը կարող է վերաբերել 1186-1190 թթ. ընկած յուրաքանչյուր թվականի, որովհետև նշվում է, որ Գին Երուսաղեմի թագավոր էր Սիբիլի կողմից կամ նրա հետ: Ժամանակագրական այս շփոթում որոշակի հստակեցում է մտցնում Կիպրոսի արքաներին նվիրված բնագրից մեջբերված հատվածի շարունակությունը. «Յորժամ Ըոիջարդ թագաւորն Ընկլիզաց էառ զԿիպրոս ի Յունաց. նա՛ այս Կի թագաւորս գնեց զկղզին ի նմանէ և եղև թագաւոր Կիպրոսի»: Ռիչարդ Առյուծասիրտ արքան Արևելք է ժամանում Խաչակրաց երրորդ արշավանքի շրջանակում (1189-1192 թթ.) (Տեր-Պետրոսյան, 2015, 10): 1191 թ. նա Բյուզանդիայից խլում է Կիպրոս կղզին, ուր մեկ տարի անց 100.000 բյուզանդով գնում է Երուսաղեմի թագավորության գահից զրկված Գի Լուսինյանը՝ հիմնելով Կիպրոսի լատինական թագավորությունը (Տեր-Պետրոսյան, 2015, 113-114): Ըստ մեջբերված հատվածի իրադարձությունների ժամանակագրական հաջորդականության՝ Գի Լուսինյանի մասին հիշատակումը ամենայն հավանականությամբ վերաբերում է 1190 թ. կամ 1191 թ., քանզի հիշատակվում է՝ «Յորժամ Ըոիջարդ թագաւորն Ընկլիզաց էառ զԿիպրոս ի Յունաց»: Ինչ վերաբերում է Երուսաղեմի արքաներին նվիրված բնագրից մեջբերված հատվածին՝ «Եկաց Ը-երրորդ թագաւոր Երուսաղեմի Կի տ Լըզինայն այր վերոյասացեալ Սպլին», ապա սա վերաբերում է 1186 թ. (Տեր-Պետրոսյան, 2015, 87): Ստացվում է, որ Երուսաղեմի արքաներին նվիրված բնագրից և «Պատմություն խրոնիկոնից» մեջբերված հատվածները վերաբերում են միևնույն՝ 1186 թ., իսկ Կիպրոսի արքաներին նվիրված բնագրից մեջբերված հատվածը՝ շատ ավելի ուշ շրջանի: Փաստորեն՝ Վ. Հակոբյանի, այսպես ասած, առաջին փաստարկը հստակեցում չի մտցնում բնագրերի հեղինակի ճշգրտման հարցում:

Վազգեն Հակոբյանը որպես երկրորդ փաստարկ նշում է, որ Ռուբինյանց իշխանների ու թագավորների պատմությունն ավարտվում է Հեթում Բ-ի թագավորության շրջանով, ասել է թե՛ իր՝ Հեթում պատմիչի ժամանակաշրջանով: Անկախ նրանից, թե ով է այդ բնագրի հեղինակը, այն ավարտվում է Հեթում պատմիչի ապրած ժամանակաշրջանով (քանի որ նա ապրել է XIII դարի երկրորդ կեսին և XIV դարում (Մաթևոսյան, 2011, 5-17)), ինչն էլ կարող է հաստատող փաստարկ հանդիսանալ²:

¹Դեհաց – կողմից կամ հետ: «Դիհ» բառը միջին հայերենում նշանակում է «կողմ» (պրսկ. Deh-dih): Հղումը՝ http://www.nayiri.com/imagelDictionaryBrowser.jsp?dictionaryId=56&dt=HY_HY&query=%D5%A4%D5%AB%D5%BO (19.05.2022 թ.):

²Հեթում Բ-ն Կիլիկիայի գահը ժառանգել է 1289 թ.:

Երրորդ փաստարկ է մատնանշում քննության ենթակա բնագրերում ու «Պատմութիւն խրոնիկոնին»-ում առկա անձնանունների (օրինակ՝ Գաւնդաւֆրէ, Պաղտին, Մելիսանթ, Ֆուք, Ամառի և այլն) և ոճական (օրինակ՝ եկաց երկրորդ թագաւոր, դուսք և այլն) նույնությունները: Հարկ ենք համարում նշել, որ Վազգեն Հակոբյանի բերված երեք փաստարկներից առաջինը շփոթ է առաջացնում, իսկ մյուս երկուսը իրապես փաստում են Հ. Կոռիկոսցու՝ բնագրի հեղինակ լինելու մասին: Կոռիկոսցու՝ բնագրի հեղինակ լինելու մասին վկայող փաստարկ է նաև, որ ազգաբանական բնագրերում տեղի ունեցած ամենաուշ իրադարձությունը վերաբերում է 1293 թ.: Առհասարակ հայ պատմագիտության մեջ 1898 ժողովածուի ազգաբանական բնագրերը քիչ են ուսումնասիրված, և բնագրերի հեղինակի խնդրի շուրջ տեսակետները բազմազան չեն, ու ձևավորված հակառակ տեսակետ չկա:

Ռուբինյաններին նվիրված մի աշխատության մասին հիշատակվում է Ղևոնդ Ալիշանի «Միսուանի» հավելվածում, որտեղ բնագրի հեղինակ համարվում է Հեթում Կոռիկոսցին. «Մինչդեռ ի տպագրել էին յետին բանք յուսոյ իմոյ, (յառաջին ատուրս ամսեան յունիսի, 1885), եհաս ի ձեռս իմ համառօտ Պատմութիւն Ռուբինեանց՝ գործ Հեթոմոյ տեառն Կոռիկոսի. յորում գրէ և զայս բան. «Արար պատերազմունս մեծամեծս, որպէս գտանի ի Լիսպատում գիրս Պատմութեան նորս» (Ալիշան, 1885, 549): Ընդգծված հատվածը նույնությամբ տեսնում ենք 1898 ժողովածուի՝ Ռուբինյաններին նվիրված բնագրում (170 ք): Մա ևս կարող է վկայել Հեթում Կոռիկոսցու բնագրի հեղինակը լինելու մասին:

Ազգաբանական աշխատանքների միևնույն հեղինակն ունենալու մասին են խոսում նաև միևնույն փաստի կրկնությունը թե՛ Կիլիկիո, թե՛ Երուսաղեմի, թե՛ Կիպրոսի, թե՛ Անտիոքի արքաներին նվիրված բնագրերում: Մասնավորապես Հայոց Լևոն Ա արքայի ամուսնության մասին հիշատակվում է Կիլիկիո, Երուսաղեմի և Կիպրոսի արքաներին նվիրված բնագրերում. «Եւ էառ իւր կին զՍպիլ դուստր Հեմրի թագաւորին Կիպրոսի. և ծնաւ դուստր մի Զապել անուն (Ռուբինյաններ)», «... Սպիլն եղև կին թագաւորին Հայոց Լևոնին Մելիսանթն եղև կին Կոյր բրընձին (Երուսաղեմ)», «... Սպիլն եղև կին Լևոն թագաւորին Հայոց, Մելիսանթն եղև կին Կոյր բրընձին (Կիպրոս)»:

Բոհեմունդ Գ-ի ամուսնության մասին վկայող փաստը նույնությամբ կրկնվում է թե՛ Երուսաղեմի, թե՛ Կիպրոսի և թե՛ Անտիոքի արքաներին նվիրված բնագրերում համապատասխանաբար. «... Մելիսանթն եղև կին Կոյր բրընձին», «... Մելիսանթն եղև կին Կոյր բրընձին», «Եւ պարտ է գիտել, որ վերոյասացեալ Կոյր բրինձն յետ մահուան Բլայժանս ամուսնոյն իւրոյ էառ կին զՄելիսանդ դուստր Հեմրի թագաւորին»: Լևոն Ա արքայի եղբոր՝ Ռուբենի Գ-ի թոռան՝ Ռուբենի (Ռայմոնդ-Ռուբեն)՝ Կիպրոսի թագավոր Ամորի Ա-ի դստեր Հելվիսի հետ ամուսնության մասին հիշատակվում է և՛ Կիլիկիո և՛ Կիպրոսի արքաներին նվիրված բնագրերում՝ համապատասխանաբար՝ «... բրինձ Ռովբէն առ իւր կին զՀելուիզ դուստր Հեմրի թագաւորին Կիպրոսի», «Հելուիզն եղև կին բրինձ Ռովբինայ»: Ռուբեն Գ իշխանի Ալիսի և Անտիոքի պրինց Բոհեմունդ Գ-ի ավագ որդու՝ Ռայմոնդի հետ ամուսնության մասին հիշատակվում է և՛ Կիլիկիո արքաներին, և՛ Անտիոքի իշխաններին նվիրված բնագրերում համապատասխանաբար. «... զԱլիծն ետ յամուսնութիւն Ռեմունտ բրընձին Անտիոքայ» և «Ռեմունտս էառ կին զԱլիծ դուստր Ռովբէն Լեոնցոյն»: Այս շարքը կարելի է շարունակել, սակայն վերը թվարկված դեպքերն արդեն իսկ խոսում են բնագրերի միևնույն հեղինակն ունենալու մասին: Անձնանունների ու ոճական նմանությունները ևս փաստում են, որ ազգաբանական գործերի հեղինակը նույն անձն է:

Ռուբինյաններին նվիրված մի քանի բնագրերի մասին: Ազգաբանական բնագրերում հիշատակված փաստերի կրկնության հանդիպում ենք 1898 ժողովածուի մյուս բնագրերում նույնպես: Միայն Սամվել Անեցու ժամանակագրությունում ու ազգաբանական գործերում փաստերի տասնյակից ավելի կրկնություններ կան: Իսկ Անեցու ժամանակագրության և պատմություն քրոնիկոնի դեպքում առնվազն երկու տասնյակ փաստերի կրկնության ենք հանդիպում¹: Ինչ վերաբերում է Միքայել Ասորու ժամանակագրության հետ համեմատությանը, ապա բնագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակին ծանոթ են եղել մյուս աշխատանքները:

Հեթում Կոռիկոսցու «Պատմութիւն ազգին Ռովբինանց, թէ որպէս տիրեցին Կիլիկիո» գործից բացի՝ նման մի պատմություն գտնվում է Մատենադարանի թիվ 979 ճաշոցի 471ա-477ա էջերում: Սա առանձին գործ չէ, այլ կազմում է 1286 թ. գրված ձեռագրի հիշատակարանի հիմնական բովանդակությունը (Հակոբյան, 1956, 97): Ճաշոցն ընդօրինակվել է Հեթում Բ արքայի պատվերով (1286 թ.), որի մասին գրված է հիշատակարանում («Արարատ», 1870, 353): Այստեղ ներկայացված է Կիլիկյան Հայաստանի համառոտ պատմությունը՝ սկսելով Բագրատունյաց Գագիկ Բ արքայի ու Կեսարիայի մետրոպոլիտ Մարկոսի հանդիպումից մինչև Լևոն Բ արքայի կառավարումը: Այս բնագիրը էականորեն տարբերվում է 1898 ժողովածուի ազգաբանական աշխատանքից բովանդակային ու ոճային տեսանկյունից: Սմբատ Գունդատարի տարեգիրքը գրվել է հիշատակարանից 9 տարի հետո (հայ. ՉԻԵ և փրկչ. 1277 թ.), իսկ Վահրամ Բարունու ոտանավոր պատմությանը հիշատակարանից մի քանի տարի առաջ («Արարատ», 1870, 354): «Պատմութիւն ազգին Ռովբինանց, թէ որպէս տիրեցին Կիլիկիո» բնագիրն ընդօրինակվել է Մատենադարանի թիվ 3965 ձեռագրում՝ 88ա-91ա էջերում (1624 թ.): Մի քանի հատվածներում մեկ բառի ավելացում կամ փոփոխություն կա (ընդհանուր 3 դեպք), մեկ այլ հատվածում. «...Ռիթայն եղև կին Կոստանդին Սարվանտիքարին տիրոջ» նախադասությունն է բացակայում:

Ռուբինյաններին նվիրված մյուս բնագիրը գտնվում է Մատենադարանի թիվ 912 (1784-1785 թթ.) ժողովածուի հիշատակարանում: 99ա-102ա էջերում ներկայացված է Ներսես Լամբրոնացու կողմից գրված Մաղմոսի մեկնությունը, որտեղ և Ռուբինյանների մասին է խոսվում. «Յիշատակարան Մեկնութիւն Մաղմոսաց գրոց Ներսիսի Լամբրոնացոյ գրեալ հրամանաւ Լեւոն Գ թագաւորի Կիլիկիոյ եւ նուիրեալ վանիցն Հաղբատայ – *Ամենապատճառ եւ անսկզբնական էութիւն... // (100ա)... եւ զսոյն հոգեշահ տառ արքայս Հայոց Լեւոն... կամեցաւ ընծայ առաքել աշխարհին Արեւելից... // (101բ)... պարգեւեաց Սուրբ ուխտին Հաղբատայ... // (102ա)... Յիշեցէք... զթագուհին զԿեռան զԿիր Աննայ... եւ այսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս, յորժամ արքայ նորին տէրս, ճանապարհորդեալ էր յԱրեւելս ի դուռն ղանին Արղունին: Յիշեցէք եւ զբարի յիշատակ սոցին զարքայիս» (Եզանեան, 2007, 1208):*

Եզրակացություններ: 1898 ժողովածուի ազգաբանական գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խնդրո առարկա չորս բնագրերի հեղինակն ամենայն հավանականությամբ եղել է միևնույն անձը: Ազգաբանական գործերը ոչ թե նույնությամբ կրկնում են 1898 ժողովածուի մյուս բնագրերի փաստերը, այլ լրացնում են միմյանց: Ժողովածուի բնագրերը տարբերվում են նաև կառուցվածքային առումով: Ազգաբանական այս աշխատանքները

¹Սամվել Անեցու ժամանակագրության մեջ Հեթում Կոռիկոսցու հավելումներին առավել մանրամասն տե՛ս Սաթևոսյան Կարեն, Հեթում պատմիչ Կոռիկոսցին..., Երևան 2011, էջ 83-92:

լավագույնս ցուցադրում են հայերի ու խաչակիրների կապերը: Վերը թվարկված չորս բնագրերում արքաների տոհմաբանության ներկայացումը վարպետորեն միահյուսված է հայ-լատին ամուսնական կապերի արձանագրմանը: Հաշվի առնելով Հեթում Կոռիկոսցու անձն ու կապերը՝ կարծում ենք, որ ազգաբանական այս բնագրերը ինքնանպատակ չեն ստեղծվել: Այն կարևոր արժեք կարող էր ներկայացնել ժամանակի խաչակրաց աշխարհի համար:

Ուսումնասիրելով քննության առարկա ժողովածուի ազգաբանական գործերը, համեմատելով ժողովածուի մաս կազմող մյուս բնագրերի հետ՝ ակնհայտ է, որ այս ազգաբանական գործերը ոչ թե արհեստականորեն մուծվել են 1898 ժողովածուում, այլ բնականորեն ու տրամաբանորեն շաղկապված են իրար: Ազգաբանական այս աշխատանքներում հստակորեն ներկայացված է փաստերի հաջորդականությունը, հակիրճ ու ճշգրտորեն ներկայացված են ժամանակի պատմական անցքերը: Ազգաբանական կամ տոհմաբանական այս աշխատանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բնագրերի հեղինակը Հեթում Կոռիկոսցին է: Այդ ամենի մասին են խոսում ոչ միայն Ղ. Ալիշանի ու Վ. Հակոբյանի փաստարկները, այլև ժողովածուի մյուս բնագրերի ուսումնասիրությունները, դրանցում տեղ գտած ոճական նմանությունները ու բնագրային համընկնումները, որոնց բազմաթիվ օրինակներ ներկայացվեցին սույն ուսումնասիրության մեջ: 1898 ժողովածուի ազգաբանական բնագրերը պատմական ու աղբյուրագիտական կարևոր արժեք են ներկայացնում:

Գրականության ցանկ

- Ալիշան Ղ. (1885), Սիսուան, Վենետիկ-Ս. Ղազար, 592 էջ:
- Բոգոյան Ա., Շուքուրով Ռ., Տեր-Ղևոնդյան Վ., Դանիելյան Գ. (2016), Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում, Երևան, 309 էջ:
- Մաթևոսյան Կ. (2011), Հեթում, Պատմիչ Կոռիկոսցին և նրա ժամանակագրությունը, Երևան, 111 էջ:
- Հակոբյան Վ. (1956), Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. ք, Երևան, 1956, 684 էջ:
- Եզանեան Օ. (2007), Մայր Ցուցակ Հայերեն Ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, իմբ.՝ Անթաբեան Փ., Քէօսեան Յ., Ղազարսեան Ա., Տ. Շահե Քիյ. Հայրապետեան, հ. գ, Երևան, 2004 էջ:
- Տեր-Պետրոսյան Լ. (2007), Խաչակիրները և հայերը, հ. ա, Երևան, 552 էջ:
- Տեր-Պետրոսյան Լ. (2015), Խաչակիրները և հայերը, հ. ք, Երևան, 672 էջ:
- «Արարատ» ամսագիր, Վաղարշապատ, (1870), էջ 353:
- Դիտտեն Հանս (1988), Հայերի տեղաշարժերը Բյուզանդական կայսրության մեջ Հուստինիանոս I-ից մինչև IX դար, ՊԲՀ, № 1:
- Շևալիե Մարի-Աննա (2013), Կիլիկյան Հայաստանի և հոգևորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից, ֆրանս. թարգմ.՝ Վարուժան Պողոսյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 116 էջ:
- Վահրամ Բաբունի (1859), Ոտանաւոր պատմութիւն Ռուբենեանց, Փարիզ, 248 էջ:
- F. N. Finck, „Zeitschrift für armenische philologie“, (1902), 1-es Heft, Marburg, էջ 177-189

Mutafian Claude, Hethoum de Korykos, historien arménien, un prince cosmopolite à l'aube du XIVe siècle, «Cahiers de recherches médiévales», № 1, Orléans (1996), p. 158-176

References

- «Ararat» amsagir, Vagharshapat, 1870, էջ 353: (In Armenian)
- Alishan Gh. (1885)**, Sisuan, Venetig-S. GHazar, 592 էջ: (In Armenian)
- Bozoyan A., SHuk'urov R., Ter-GHewondyan V., Danielyan G. (2016)**, Kilikyan Hayastaně sahmanakits' petakan miavorneri ěnkalumnerum, Erewan, 309 էջ: (In Armenian)
- Ditten Hans (1988)**, Hayeri teghasharzh'erě Byuzandakan kaysrut'yan mej Hustinianos I-its' minch'ew IX dar, PBH, № 1: (In Armenian)
- Ekanean Ō. (2007)**, Mayr TS'uts'ak Hayerēn DZeragrats' Mashtots'i anvan Matenatarani, khmb. ` Ant'apean P', K'ēōsēean Y., GHazarosean A., T. SHahē K'hy. Hayrapetean, h. g, Erewan, 2004 էջ: (In Armenian)
- F. N. Finck**, „Zeitschrift für armenische philologie“, 1902, 1-es Heft, Marburg, էջ 177-189.
- Hakobyan V. (1956)**, Manr zh'amanakagrut'yunner XIII-XVIII dd., h. b, Erewan, 1956, 684 էջ: (In Armenian)
- Mat'ewosyan K. (2011)**, Het'um, Patmich' Kořikosts'in ew nra zh'amanakagrut'yuně, Erewan, 111 էջ: (In Armenian)
- Mutafian Claude**, Hethoum de Korykos, historien arménien, un prince cosmopolite à l'aube du XIVe siècle, «Cahiers de recherches médiévales», № 1, Orléans, 1996, p. 158-176
- Shewalie Mari-Anna (2013)**, Kilikyan Hayastani ew hogeworaspetakan miabanut'yunneri p'okhharaberut'yunneri patmut'yunits', frans. t'argm. ` Varuzh'an Poghosyani, Erewan, EPH hrat., 116 էջ: (In Armenian)
- Ter-Petrosyan L. (2007)**, KHach'akirnerě ew hayerě, h. a, Erewan, 552 էջ: (In Armenian)
- Ter-Petrosyan L. (2015)**, KHach'akirnerě ew hayerě, h. b, Erewan, 672 էջ: (In Armenian)
- Vahram Rabuni (1859)**, Otanawor patmut'iwn Rubeneants', P'ariz, 248 էջ: (In Armenian)